տաճարների սրբատաշ քարէ որմների մնացորդները եւ հետաքրքրութիւնը սաստկանում է: Ապա Պալխարին միանում է Ութավի առուակը, որ գալիս, անցնում է համանուն գեղի մօտից: Ալթի-Պարմագ լեռներից իջնում է Ալթի առ-կը, դարձեալ հիւսիսից-հարաւ Հինդկարիս վտակին զուգընթաց անցնում է Սուդասխեւի (Սուրդաս) եւ ապա Հուդասխեւի ձորերից, որտեղ միանում է Մարցիս լեռներից ուղիղ դէպի հարաւ իջած Կոբակ առուակին: Կոբակը ոռոգում է համանուն աւանը եւ մինչեւ Ալթի առուակին միանալը ընդունում է աջից Բոհլեսի լեռներից իջած խեւակ առուակները, որոնք Ալթի առուակին միանալով՝ իջնում են դէպի հարաւ: Կոբակի ստորին ափերում, Պարխալ աւանից 2—3 կիլոմետր հեռաւորութեամբ գտնուում է Հուդասխեւի աւանը, որը Պալխար եւ Բահլ աւանների ճիշտ միջին մասն է բռնում եւ համարեա թէ այս երեքը միասին մի ընդարձակ այգեստանի Շահրիստանն են կազմում: Կոբակ առուակին միանում է Բահլ առ-կը այգեստաններից շատ ցած. իսկ ինքը՝ Բահլը բղխում է Սանացրիա լեռներից, իջնում է հարաւ եւ միանում Կոբակին: Բահլի առ-ի երկու կողմերը տարածւում է Բահլ աւանն ու այգեստանները, որոնք համարեա թէ միացած են, ինչպէս վերեւն ասացինք, Հուդասխեւ եւ Պալխար աւաններին: Բահլ կամ Բալհի աւանի աւերակները